

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՑԵԱՆ,
ՈՐ ՑԵՐԵԻԱՆ**

Համագգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Յարգարժան պրն Զեյթունցեան, տաղանդաւոր հայորդուդ անունն ու գրական գործունէութիւնը հանրաճանաչ են ընթերցասէր լայն շրջանակներում: Դուք արժէքաւոր ստեղծագործութիւններով բարեգարդում էք հայ գրականութեան հարուստ անդաստանը՝ ազգասէր ու հաւատաւոր մտաւորականի Ձեր արժանաւոր մասնակցութիւնը բերելով մեր մշակոյթի նորոգ զարթօնքին ու հասարակական կեանքի առաջընթացին: Ձեր գրական գործերը, որ յատկանշուում են խոհափիլիսոփայական մտածողութեամբ, ընթերցողին վեր են բարձրացնում առօրեայ իրականութիւնից, հաղորդակցում ճշմարիտ ու մնայուն արժէքներին, մարդկային վեհագոյն խոհերին ու ձգտումներին: Այսօր Ձեր պիեսները յաջողութեամբ բեմադրուում են մայրաքաղաքի թատրոններում՝ մեծ ընդունելութեան արժանանալով թատերասէր հասարակութեան կողմից:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր արդիւնաշատ գործունէութեան ողջ ընթացքին մշտապէս դրսեւորել էք որդիական անկեղծ սէր ու հաւատարմութիւն հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ լուսաւորչա-հաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Մեծարգոյ Տիար Զեյթունցեան, մեր մշակոյթի, հայ գրականութեան անդաստանում Ձեր մեծ վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթք ենք վերառաքում առ Ամենակալն Աստուած՝ հայցելով, որ միշտ շնորհառատ պահի Ձեր հաւատաւոր հոգին եւ պարգեւի երջանկութեամբ ու ստեղծագործական նորանոր ձեռքբերումներով լեցուն արեւշատ կեանքի տարիներ: Թող Բարձրեալ Տէրն Իր Ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ՝ երկնահեղ հաւապագ բիւր օրհնութեամբ:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեւեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Հունիսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 409